ՀՀ ԳԱԱ ինստիտուտների կողմից 2015թ. կազմակերպվող գիտական միջոցառումների ցանկ

- **2015թ.-ի մայիսի 26-29-ը** ՀՀ ԳԱԱ Ա. Նազարովի անվ. երկրաֆիզիկայի և ինժեներային սեյսմաբանության ինստիտուտը և ՀՀ ԳԱԱ քիմիական և Երկրի մասին գիտությունների բաժանմունքը Ծաղկաձորում կազմակերպում են "Երկրաֆիզիկայի, ինժեներային սեյսմաբանության և սեյսմակայուն շինարարության ժամանակակից խնդիրները" երիտասարդ գիտնականների II միջազգային գիտաժողովը

- **2015թ.-ի հունիսի 1-5-ը** ՀՀ ԳԱԱ Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտը կազմակերպում է պրակտիկ դասընթացներ “Քսենոպուսի օոցիտներում պոտենցալ-կախյալ կալիումական անցուղիների ֆունկցիոնալ գնութագրումը” թեմայով

- **2015թ.-ի հունիսի 23-26-ը** ՀՀ ԳԱԱ "Հայկենսատեխնոլոգիա" ԳԱԿ-ը կազմակերպում է Երիտասարդ գիտնականների միջազգային գիտաժողով "Երկխոսություն գիտության մասին" թեմայով, որը նվիրված է կենտրոնի հիմնադրման 5-ամյակին

- **2015թ.-ի սեպտեմբերի 14-18-ը** ՀՀ ԳԱԱ Մ.Գ. Մանվելյանի անվ. ընդհանուր և անօրգանական քիմիայի ինստիտուտը և ՀՀ ԳԱԱ քիմիական և Երկրի մասին գիտությունների բաժանմունքը Երևանում կազմակերպում են "Քիմիա և քիմիական տեխնոլոգիաներ" IV միջազգային գիտաժողովը

- ՀՀ ԳԱԱ Ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտը և ԵՊՀ Ֆիզիկայի ֆակուլտետը, կազմակերպում են ավանդական "Էլեկտրոնների, պոզիտրոնների, նեյտրոնների և ռենտգենյան ճառագայթների ցրումը արտաքին ազդակների առկայությամբ" միջազգային գիտաժողովը (**2015 թ.-ի սեպտեմբերի 14-16**) և Գ.Ա. Ասկարյանի անվան երիտասարդ գիտնականների դպրոց (**2015 թ.-ի սեպտեմբերի 17-20**), որոնք կանցկացվեն Երևան և Մեղրի քաղաքներում: Մանրամասները՝ www.conference.iapp.am կայք էջում

- **2015թ.-ի սեպտեմբերի 28-ից հոկտեմբերի 2-ը** ՀՀ ԳԱԱ ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտը անց է կացնում "Կոմպյուտերային գիտություն և ինֆորմացիոն տեխնոլոգիաներ՝ CSIT-2015" 10-րդ միջազգային գիտաժողովը: Մանրամասներին կարելի է ծանոթանալ http://www.csit.am կայքում

- **2015թ.-ի հոկտեմբերի 5-9-ը** ՀՀ ԳԱԱ Ա.Բ. Նալբանդյանի անվ. Քիմիական ֆիզիկայի ինստիտուտը, ՌԳԱ Ն.Ն. Սեմյոնովի անվ. Քիմիական ֆիզիկայի

ինստիտուտը և ՀՀ ԳԱԱ քիմիական և Երկրի մասին գիտությունների բաժանմունքը Երևանում կազմակերպում են “Քիմիական ֆիզիկայի արդի խնդիրները” IV միջազգային գիտաժողովը

- **2015թ.-ի հոկտեմբերի 5-9-ը** ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտում տեղի կունենա Հոբելյանական միջազգային գիտաժողով "ԲՈՒՍԱԲԱՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ"՝ նվիրված ՀՀ ԳԱԱ Երևանի Բուսաբանական այգու հիմնադրման 80-ամյակին

- **2015թ.-ի հոկտեմբերի 7-ից 9-ը** Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտը Երևանում կազմակերպում է Հայերենագիտական միջազգային 10-րդ գիտաժողովը

- **2015թ.-ի հոկտեմբերի 15-16-ը** տեղի կունենա Հայոց ցեղասպանության 100-ամյա տարելիցին նվիրված "Հայոց ցեղասպանություն-100. ճանաչումից՝ հատուցում" միջազգային գիտաժողով: Գիտաժողովի կազմակերպիչներն են ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիան և Երևանի Պետական Համալսարանը